

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2017թ. հոկտեմբերի 3-5-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական հանձնաժողովի արդարադատության և սպառողների գլխավոր տնօրինություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոպական հանձնաժողովի արդարադատության և սպառողների տնօրինության և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության կողմից կազմակերպված ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարցերով ԱլԳ Առաջին հարթակի հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Քննարկման առարկա էին արդարադատության ոլորտի բարեփոխումների գործընթացում միջազգային համագործակցության զարգացման և արդյունավետության բարձրացման ուղիները, ԱլԳ երկրների փորձը դատաիրավական բարեփոխումների ոլորտում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. հոկտեմբերի 4-5-ը Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) կայացել է Եվրոպական հանձնաժողովի արդարադատության և սպառողների տնօրինության և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության կողմից կազմակերպված ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարցերով ԱլԳ

Առաջին հարթակի հանդիպումը, որին Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը:

Ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարցերով ԱլԳ Առաջին հարթակի հանդիպման ընթացքում քննարկվել են արդարադատության ոլորտի բարեփոխումներին, դատական համակարգի անկախության ապահովմանը և հաշվետվողականության ամրապնդմանը նվիրված, ինչպես նաև արդարադատության ոլորտի բարեփոխումների գործընթացում միջազգային համագործակցության զարգացման և արդյունավետության բարձրացման ուղիները, ԱլԳ երկրների փորձը դատախիզական բարեփոխումների ոլորտին առնչվող հարցեր, որոնք ներկայացվել են 2017թ. հուլիսի 7-ին կայացած Արևելյան գործընկերության երկրների արդարադատության և ներքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում: 2017թ. հուլիսին կայացած հանդիպման ընթացքում Արևելյան գործընկերության երկրների արդարադատության և ներքին գործերի նախարարները վերահաստատել են դատական համակարգի արդյունավետության ապահովման կարևորությունը ԱլԳ երկրներում, ինչպես նաև խրախուսել են Արևելյան գործընկերության երկրներում արդարադատության բարեփոխումների իրականացումը:

Ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարցերով ԱլԳ Առաջին հարթակի հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական հանձնաժողովի և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության կողմից համատեղ պատրաստված 20 արդյունք մինչև 2020թ. փաստաթղթին:

Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է արդարադատության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ կողմից ձեռնարկվող քայլերը և ապագայում

իրականացման ենթակա արդարադատության ոլորտի բարեփոխումները: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծով ամրագրված իրավակարգավորումներին՝ մատնանշելով Բարձրագույն դատական խորհրդի՝ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ մարմնի դերը: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը հանդիպման մասնակիցներին տեղեկացրել է, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում իրավական և դատական բարեփոխումների 2018-2023թթ. նոր գործողությունների ծրագիրը, որը նախատեսվում է ընդունել 2018թ. սկզբին:

Ելույթի ընթացքում արդարադատության նախարարի տեղակալը շեշտել է արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքում միջազգային գործընկերների կողմից ցուցաբերած աջակցության կարևորությունը և հույս հայտնել հետագա արդյունավետ համագործակցության համար:

Հանդիպման ընթացքում Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները ողջունեցին ԱլԳ երկրների՝ արդարադատության ոլորտի բարեփոխումներին ուղղված ջանքերը, ինչպես նաև վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ սատարելու տարածաշրջանում տեղի ունեցող արդարադատության ոլորտի բարեփոխման գործընթացին՝ քաղաքական աջակցության, փորձագիտական խորհրդատվության և ֆինանսական օժանդակության միջոցով:

10.10.2017թ.